ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ք. Երևան 19 մայիսի 2021 թ.

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամը (իրավաբանական անձի պետական գրանցման վկայական 03Ա 990081, տրված 22.12.2014թ., իրավաբանական հասցեն՝ ք. Երևան, Ալեք Մանուկյան 1(մեկ)) (այսուհետ՝ ԵՊՀ), ի դեմս ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Գեղամ Գևորգյանի, ով գործում է համաձայն կազմակերպության կանոնադրության, մի կողմից և «Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամը (իրավաբանական անձի պետական գրանցման վկայական 222.160.906715, տրված 23.12.2002թ., իրավաբանական հասցեն՝ ք. Երևան, Տիգրան Մեծի 17) (այսուհետ՝ ՀՊՄՀ)՝ ի դեմս ռեկտոր Ռուբեն Միրզախանյանի, ով գործում է համաձայն կազմակերպության կանոնադրության, մյուս կողմից, (ԵՊՀ-ն և ՀՊՄՀ-ն միասին այսուհետ՝ կողմեր) կնքեցին սույն հուշագիրը հետևյալի մասին.

1. ՀՈՒՇԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Սույն հուշագրի նպատակը Երևանի պետական համալսարանի մշակույթի կենտրոնի և Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի կուլտուրայի ֆակուլտետի «Զվարթնոց» քանոնահարների անսամբլի միջև բազմակողմանի համագործակցությունն է՝ այդ թվում համատեղ միջոցառումների և ծրագրերի կազմակերպումն ու իրականացումը:

2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Կողմերը պարտավորվում են՝

2.1.1. ԵՊՀ Մշակույթի կենտրոնի և ՀՊՄՀ կուլտուրայի ֆակուլտետի «Զվարթնոց» քանոնահարների անսամբլի համատեղ ջանքերով իրականացնել բազմաբնույթ ծրագրեր,

2.1.2. ապահովել ԵՊՀ Մշակույթի կենտրոնի սաների և ՀՊՄՀ կուլտուրայի ֆակուլտետի ուսանողների մասնակցությունը համատեղ միջոցառումներին:

2.2 Սույն հուշագրի կողմերը պարտավոր են բարեխղճորեն կատարել սույն հուշագրով ստանձնած պարտականությունները:

2.3 Սույն հուշագրի նպատակներից բխող այնպիսի հարաբերությունները, որոնք նախատեսում են ֆինանսական պարտավորություններ, յուրաքանչյուր դեպքում կարգավորվում են կողմերի միջև կնքվող լրացուցիչ պայմանագրերով:

2.4 Կողմերն ունեն ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ իրավունքներ և պարտականություններ ևս:

3. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

3.1. Սույն հուշագրի կնքման և կատարման հետ կապված կողմերի միջև փոխհարաբերությունները բնութագրվում են միմյանց նկատմամբ ցուցաբերվող հատուկ վստահություն, ինչպես անձանց, որոնք ի վիճակի են լավագույնս ապահովել սույն հուշագրի նպատակների իրականացումը:

3.2. Սույն հուշագրի նպատակների իրականացման հետ կապված կողմերի միջև բոլոր ծանուցագրերը, հարցումները կամ հաստատումները ուղարկվում են գրավոր՝ պատշաճ կերպով և ստորագրվում են լիազորված անձանց կողմից:

3.3. Կողմերը հավաստում են, որ սույն հուշագրի կնքման պահին հայտնի չեն այնպիսի հանգամանքներ, որոնց հետևանքով իրենք իրավասու կամ ի վիճակի չեն կնքել կամ կատարել սույն հուշագիրը:

3.4. Կողմերը հաստատում են նաև, որ սույն հուշագրի կնքումը և կատարումը լիովին համապատասխանում է իրենց շահերին, ինչպես նաև չի վնասում համբավին:

3.5. Կողմերի անվանման, գտնվելու վայրի փոփոխման դեպքում նրանք պարտավոր են մեկ շաբաթյա ժամկետում միմյանց գրավոր տեղեկացնել կատարված փոփոխությունների մասին:

3.6. Սույն հուշագիրը կողմերի համաձայնությամբ կարող է ժամկետից շուտ դադարեցվել, այդ մասին մյուս կողմին ծանուցելով առնվազն երկու ամիս առաջ:

3.7. Կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերն ենթակա են լուծման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.8. Բոլոր այն հարցերը, որոնք նախատեսված չեն սույն հուշագրով, կարգավորվում են ՀՀ գործող օրենսդրությամբ:

3.9. Սույն հուշագիրը կազմված է հայերեն լեզվով և կնքվում է երկու հավասարազոր օրինակից:

4. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՏԱՐՐԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԵՊՀ	ՀՊՄՀ
«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ	«Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամ
ք. Երևան, Ալեք Մանուկյան 1	ք. Երևան, Տիգրան Մեծի 17
ՀՎՀՀ 01506928	ՀՎՀՀ 02527624
«Արդշինբանկ» ՓԲԸ	«Արարատբանկ» ՓԲԸ
Հ/Հ 247010000906 (AMD)	Հ/Հ [illegible] (AMD)
ԵՊՀ ռեկտորի ժ/պ-Գ. Գևորգյան	ՀՊՄՀ [illegible] զախանյան